



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 9 ՂԵԿՏԵՄԲԵՐ, 2024

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

### ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Տես տառապանքս, եւ ազատէ զիս,  
որովհետեւ ես Օրէնքդ բնաւ միտքէս չհանեցի:  
Իրաւունքս պաշտպանէ եւ փրկէ զիս.  
Կեանք տուր ինձի՝ քո խոստումիդ համաձայն:  
Փրկութիւնը ամբարիշտներէն հեռու է,  
որովհետեւ կանոններուդ հետամուտ չեմ:  
Որքան առատագութեամբ ես դուն, Տէր,  
վնիռովդ՝ կեանք տուր ինձի:  
Բազմաթիւ են զիս հալածողները եւ ոսոխներս,  
բայց ես պատուիրաններդ երբեք չխոտորեցայ:  
Կը զգուիմ, տեսնելով իրենց հաւատքը կորսնցուցած մարդիկը,  
որոնք քո խօսքիդ չեն հնազանդիր:  
Տես, թէ ինչքան կը սիրեմ հրահանգներդ, Տէր,  
եւ քո սիրովդ կեանք տուր ինձի:  
Քու խօսքդ ամբողջութեամբ նշմարտութիւնն է,  
եւ քո բոլոր վնիռներդ՝ յաւիտեանապէս արդար:

### ՇԱՐԱԿԱՆ

Ինձ օգնութիւն ի տեսանէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:

Չի՛նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից.

ինձ օգնութիւն ի տեսանէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:

### ԱՊՈԹՔ

Օգնէ մեզի, Տէ՛ր, օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ մեզ եւ քու մեր մեղքերը, Քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական իսաչիդ հովա-նիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ Քեզի ապաւինած եւ Քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ՍԱՂՍՈՍ 74

### ԱՂՈՐԹ ԱԶԳԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դուն, ով Աստուած, մեր թագաւորն եւ սկիզբէն ի վեր,  
քանի-քանի անգամներ փրկութիւնդ ցոյց տուիր երկրի վրայ:

Քու գօրութեամբդ նեղեցիր ծովը,

եւ վիշապներու գլուխները փշրեցիր ջուրերուն մէջ:

Դուն ծովային վիշապին գլուխները ջախջախեցիր,

եւ գայն կերակուր դարձուցիր անապատի գազաններուն:

Դուն էիր որ բղիսեցուցիր աղբիւրներն ու վտակները,

դուն էիր որ ցամփեցուցիր մշտահոս գետերը:

Քու ձեռքդ են ցերեկն ու գիշերը,

դուն ինքդ հաստատեցիր լուսինը եւ արեւը:

Դուն էիր որ որոշեցիր երկրին բոլոր սահմանները,

ամառն ու ձմեռը դուն ստեղծեցիր:

Յիշէ թէ ինչպէս թշնամիներդ

նախատինքի կ'ենթարկեն քեզ, Տէր,

անմիտ մարդիկ կ'անարգեն քու անունդ:

Աղաւնիի պէս անպաշտպան քու ժողովուրդդ

գազաններուն ձեռքը մի մատներ,

քու տառապեալ ժողովուրդդ ընդմիշտ մի լքեր:

Մի մոռնար մեզի հետ կնքած քու ուխտդ, եւ տես,

երկրին բոլոր մութ անկիւններուն բռնութիւնը կը տիրէ:

Թոյլ մի տար որ անիրաւուածը անարգուած ետ դառնայ,

ընդհակառակը, թող աղքատն ու չքաւորը օրհներգեն քու անունդ:

Ել, ով Աստուած, դուն քու դատդ պաշտպանէ,

տես թէ ինչպէս անմիտ մարդիկ կը ծաղրեն քեզ օրն ի բուն:

Մի մոռնար քեզի հակառակողներուն կանչուրոտութիւնը,

այն մշտական աղմուկը որ կը բարձրացնեն քեզի դէմ ելողները:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ՍԱՂՄՈՍ 74:12-23

## ԱՂՈԹՔ ԱԶԳԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 74:12-23

Կը շարունակենք 74-րդ Սաղմոսին երկրորդ բաժինը: Յիշենք, թէ ինչպիսի խնդրանքով սկսաւ այս Սաղմոսը, թէ ինչո՞ւ Աստուած լքած է զիրենք, բարկութեան կրակը մինչեւ վերջ վրանին կը թափէ: Կը յիշեցնէ թէ ինչպէս Աստուած Իրեն համար ժողովուրդ ընտրեց, եւ Իր բնակութիւնը հաստատեց: Ահա այդ բնակարանը թշնամին քարուքանդ կ'ընէ: Հարց կու տայ թէ մինչեւ ե՞րբ հակառակորդը պիտի նա-խապէ եւ Աստուծոյ անունը անարգէ, ինչո՞ւ բան մը չես ըներ, ինչո՞ւ զօրութիւնդ ցոյց չես փար:

Պատմութիւնը վկայ, եւ ահա այդ պատմութեան օրինակները այսօր ալ կ'ապրինք: Այն նոյն թշնամին որ եկաւ քանդեց, կոտորեց, այսօր չկայ: Այսօր ալ մենք կը փեսնենք ու կը վկայենք, թէ ինչպէս բռնաբերեր, թագաւորներ, նախագահներ, որոնց երբ ժամանակը կը հասնի, իրենց աւարտը կը գտնեն: Ահա թէ ինչպիսի օրհներգութեամբ Մարիամ Աստուածածին Աստուծոյ փառաբանանք կ'ընէ ըսելով. «Իր բազուկով Ան զօրութիւն ցոյց փուտաւ, ոչնչոցուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահագրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները» Ղուկ 1:51-52: Սաղմոսերգուն նոյն զօրութիւնը կը փափաքի որ Աստուած ցոյց փայ:

Իսկ հիմա նեղութեան եւ դժուարութեան պահուն, ան կը խոստովանի թէ Աստուած Ինք է Թագաւորը եւ քանի-քանի անգամներ Աստուած ցոյց փուտաւ է փրկութիւնը: Թշնամին եթէ պահ մը կու գայ քանդելու, կոտորելու, արիկա Աստուծոյ կողմէ թոյլ փրուած, որուն նպատակը Աստուծոյ ժողովուրդին վերադարձը խոստովանութեամբ, գոջումով եւ ապաշխարութեամբ: Յաճախ այնպէս կը թուի, թէ որքան զօրաւոր է թշնամին, անպարտելի, անյաղթահարելի, որուն դիմաց ալ յաճախ յուսահատութեան պահեր կ'ապրինք, եւ կարծէք կու գանք այն եզրակացութեան, թէ չարը ամենագոր է եւ Աստուած չի կրնար բան մը ընել: Մինչ այդ կը մոռնանք այն միջամտութիւնները որ Աստուած գործած է մեր կեանքին մէջ: Ահա անցեալի դէպքերէն կը սկսի յիշելու Սաղմոսներգուն, թէ քանի-քանի անգամներն Աստուած Իր փրկութիւնը ցոյց փուտաւ սկսեալ Եգիպտոսի ելքէն: Ահա անոր արտայայտութիւնն է որ կ'ընէ այսպէս ըսելով. «Քու զօրութեամբդ ծովը ճեղքեցիր, եւ վիշապներուն գլուխները փշրեցիր ջուրերուն մէջ»: Այսպէս վի-շապներ արտայայտութիւնը ակնարկութիւնն է չարին: Աստուածաշունչին մէջ ծովը նաեւ խորհրդանիշ է անօրէններուն, եւ ահա Աստուած Իր զօրութեամբը կը ճեղքէ ծովը: Զարմանալիօրէն մեր եկեղեցական հայրերը երբ պիտի ներկայացնեն Քրիստոսի ծննդեան ութօրեայ պահը շարականի ճամբով կը ներկայ-յացնեն այսպէս. «Յորդանան գետին մէջ ջախջախեցիր Վիշապին գլուխը»: Ծննդոց գիրքին մէջ Աստու-ծոյ պատուէր, «Դուն անոր գարշապարը պիտի խայթես, եւ անիկա քու գլուխդ պիտի ջախջախէ»: Տակաւին կը շարունակէ ըսելով, «Դուն ես որ կը բղիւնեցնես աղբիւրներն ու գետերը, ինչպէս նաեւ կը ցամքեցնես մշտապէս գետերը»: Նաեւ կ'անդրադառնայ Աստուծոյ սքեղծագոր ըլլալու հանգամանքին, հաստատելով լուսինն ու արեւը, որոշելով երկրին բոլոր սահմանները, ինչպէս նաեւ փարուան եղանակ-ները:

Ապա կը խնդրէ որ Աստուած անպաշտպան գազաններուն ձեռքը չձգէ Իր փառապետ ժողովուրդը, յիշեցնելով այն ուխտը որ Աստուած կ'կնքեց Իր ժողովուրդին հետ: Ահա հոս է բանալին, որ Աստուած արդար ու ճշմարիտ է, անգամ մը որ ուխտ կ'կնքեց, այդ ուխտը չի դրժեր, չի մոռնար ու չի փեխեր, պայմա-նաւ, որ ժողովուրդը գոջումով, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ վերադառնայ Իրեն: Ահա մնայուն աղօթք, աղաչանք, պաղարանք խնդրելու Աստուծմէ որ պաշտպանէ Իր ժողովուրդը, նաեւ շնոր-հակալութիւն, որ Աստուած կը լսէ մեր աղօթքը:

Ի վերջոյ, անգամ մը եւս կը խնդրէ, որ Աստուած ելլէ Իր դարը պաշտպանելու համար, որ կը նշանակէ, մեր թշնամին խորքին մէջ Աստուծոյ թշնամին է, ահա թէ ինչու է որ Աստուած կը յիծէցնէ ըսելով, «Իմա է վրէժխնդրութիւնը», եւ կամ այլ ուրիշ փեղ մը, «Իմ դարս դուն փես»: Որովհետեւ Աստու-ծոյ դարսն է:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,*  
*ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,*  
*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*  
*եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*